

9-47

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ ԳԵՎՈՐԳԻ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԸ ՄՈՒՀԱՄՄԵԴ ԶՈՍՆԻ ՄՈՒՔԱՐԱՔԻ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ (1981-1991ԹԹ.)

Է.00.02\_ «ԸՆԴՀԱՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

*Իրավիճակը թերահավատ  
պահանջներ  
Գ. Գրիգորյան*

34-70

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր՝  
պրոֆեսոր՝ Ն. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝ Վ. Ա. Բայբուրդյան

պատմական գիտությունների թեկնածու՝  
Լ. Ս. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարանի  
արաբագիտության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2004թ. սեպտեմբերի 9-ին, Ժ.15-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ԲՈՂ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2004թ. օգոստոսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ Պ. Ա. Չոբանյան

Ն Ե Ր Ա Ծ Ու Թ Յ Ու Ն

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջարաբական հարաբերությունները միջազգային հարաբերությունների կարևոր բաղադրիչն են: Առանց այդ հարաբերությունների ուսումնասիրության դժվար է ճիշտ ըմբռնել տարածաշրջանային զարգացումները: Այս տեսանկյունից դրանց ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական և գործնական կարևոր նշանակություն:

1973թ. արաբ-խորայելական պատերազմից հետո Եգիպտոսի արտաքին քաղաքականության մեջ ի հայտ եկան Իսրայելի հետ համաձայնության գալու միտումներ, որոնք հանգեցրին 1978թ. քենփոկիդյան համաձայնագրերի, իսկ այնուհետև 1979թ. Եգիպտա-խորայելական անջատողական հաշտության պայմանագրի ստորագրմանը: Եգիպտոսի նախագահ Անվար ա-Սադաթի (1970-1981) քաղաքականությունը դժգոհության ալիք առաջացրեց Արաբական Արևելքում, որի արդյունքում Եգիպտոսն արաբական աշխարհում հայտնվեց քաղաքական մեկուսացման մեջ: Սակայն 1980թ. հոկտեմբերի 6-ին Անվար ա-Սադաթի սպանությունից հետո Եգիպտոսի նորընտիր նախագահ Հոսնի Մուբարաքի ձկուն արտաքին քաղաքականության շնորհիվ Եգիպտոսը կարողացավ վերականգնել իր երբեմնի ազդեցիկ և կայուն դիրքերն արաբական աշխարհում:

Եգիպտոսի 1981-1991թթ. պատմությանը բնորոշ են քաղաքական նոր մոտեցումները, որոնք առանձին դեպքերում ձեռք էին բերում տարածաշրջանային կարևոր նշանակություն: 1981-1991թթ. Եգիպտոսին հաջողվեց պահպանելով Իսրայելի հետ խաղաղ գոյակցության և վերջինիս հետ քենփոկիդյան համաձայնագրերով ամրագրված հարաբերությունները՝ հաղթահարել քաղաքական մեկուսացումն արաբական աշխարհում, ինչպես նաև հնարավորինս հակազդել Իսրայելի ագրեսիվ քաղաքականությանը: 1980-ականների վերջին սերտ հարաբերություններ հաստատելով արաբ-խորայելական հակամարտության մեջ ներգրավված կողմերի հետ՝ Եգիպտոսը փորձեց միջնորդի դեր կատարել մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործում իր արտաքին քաղաքականության մեջ մեծ տեղ հատկացնելով պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորմանը:

Եգիպտոսի հավասարակշռված և կառուցողական դիրքորոշումը 1980-1988թթ. իրաքա-իրանյան պատերազմի, 1982թ. Լիբանանում իսրայելական ագրեսիայի, 1990թ. Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման հարցում, ինչպես նաև

անմիջական մասնակցությունն Իրաքի դեմ միջազգային կոալիցիայի ռազմական գործողություններին, նպաստեցին արաբական աշխարհում Եգիպտոսի քաղաքական դերի վերաառժեվորմանը, ինչպես նաև վերջինիս «արաբական ընտանիք» վերջնական վերադարձին:

Եգիպտոսի արդի շրջանի պատմության ուսումնասիրությունը գրեթե անհնար է առանց նշված ժամանակաշրջանում Եգիպտոսի արաբական քաղաքականության հետազոտության, որի շնորհիվ էլ ավելի տեսանելի են դառնում մերձավորարևելյան տարածաշրջանի հիմնահարցերի հետ կապված մի շարք իրողություններ, հստակեցվում է դրանց նկատմամբ Եգիպտոսի դիրքորոշումը: Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է նաև տարածաշրջանային գործընթացներն ավելի համապարփակ ու խորը գնահատելու տեսանկյունից:

#### 2 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է 1981-1991թթ. Եգիպտոսի արաբական քաղաքականության առանցքային հարցերն ամբողջական ներկայացնելու նպատակով: Դրան հասնելու համար հեղինակն իր առջև խնդիր է դրել.

- Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա ներկայացնել Եգիպտոս-խորհրդային հարաբերությունները 1978-1981թթ.՝ քեմփոկիդյան համաձայնագրերի ստորագրումից մինչև Եգիպտոսի նախագահ Անվար աս-Սադաթի սպանությունն ընկած ժամանակահատվածը՝ ցույց տալով արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացումն ու դրա պատճառները:
- Չետագոտել 1981թ. Եգիպտոսի նախագահի պաշտոնը ստանձնած Յուսուֆ Սուբարաբի արտաքին քաղաքական նոր հայեցակարգը:
- Ուսումնասիրել Եգիպտոսի արաբական քաղաքականության ակտիվացմանը նպաստող հանգամանքները և իրողությունները:
- Պարզաբանել Կահիրեի դիրքորոշումը 1980-1988թթ. իրաքա-իրանյան պատերազմի, 1982թ. Լիբանանում իսրայելյան ագրեսիայի, 1990թ. Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման, ինչպես նաև Իրաքի դեմ 1991թ. միջազգային կոալիցիայի ռազմական գործողությունների նկատմամբ:
- Վերլուծել ուսումնասիրվող ժամանակաշրջանում Եգիպտոսի դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ:
- Լուսաբանել 1980-ականների վերջին արաբական աշխարհում ձևավորված ուժերի նոր հարաբերակցությունը:

#### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության: Թեև Եգիպտոսի ներքաղաքական և արտաքին քաղաքական որոշ հարցեր քննարկել են մի շարք հայ և օտարազգի հեղինակներ, սակայն առ այսօր 1981-1991թթ. Եգիպտոսի արաբական քաղաքականությանը նվիրված ամբողջական ուսումնասիրություն առանձին ներկայացված չէ: Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի քաղաքագիտության ոլորտի մասնագետները սովորաբար իրենց ուսումնասիրություններում առաջնահերթությունը տվել են 1952-1981թթ. Եգիպտոսի պատմության առանձին խնդիրների ուսումնասիրությանը:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել Եգիպտոս-արաբական հարաբերությունները, ինչպես նաև արաբական աշխարհում ընթացող քաղաքական գործընթացների նկատմամբ Եգիպտոսի դիրքորոշումը 1981-1991թթ.: Նորովի է մեկնաբանվում քեմփոկիդյան համաձայնագրերի և Եգիպտոս-խորհրդային հաշտության պայմանագրի կարևորությունը՝ Եգիպտոսի տեսանկյունից, ինչպես նաև արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցը:

#### 4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսությունն ընդգրկում է 1981-1991թթ. ժամանակահատվածը, որ հանընկնում է նախագահ Յուսուֆ Սուբարաբի իշխանության առաջին տասնամյակին: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 1981թ. Անվար աս-Սադաթի սպանությունից հետո իշխանության եկած Յուսուֆ Սուբարաբի ճկուն արտաքին քաղաքականության շնորհիվ 1981-1991թթ. Եգիպտոսը դուրս եկավ արաբական աշխարհում քաղաքական մեկուսացումից՝ միաժամանակ կարևոր դերակատարություն ստանձնելով արաբական և տարածաշրջանային գործերում:

#### 5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՅԻՄԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը 1981-1991թթ. Եգիպտոսի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակի, Եգիպտոս-արաբական հարաբերություններով պայմանավորված խնդիրների, տարածաշրջանային իրադարձությունների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնությունն է, և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել Եգիպտոսում և առհասարակ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում տվյալ ժամանակաշրջանի քաղաքական գործընթացների, Եգիպտոսի արաբական քաղաքականության և մերձավորարևելյան տարածաշրջանային հիմնախնդիրներին նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում: Աշխատության եզրահանգումները կարող են օգտակար լինել նաև պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Եգիպտոսի և մերձավորարևելյան տարածաշրջանի այլ երկրների նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական որոշ հարցեր մշակելու տեսանկյունից:

## 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և նախնական հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում: Դրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, թեգերում, ինչպես նաև Երիտասարդ արևելագետների XXIII, XXIV և XXV հանրապետական գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում: Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած աշխատանքների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

## 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՈՒՐՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հեղինակը հնարավորություն է ունեցել ծանոթանալու ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանի, Հիմնարար գրադարանի, Հայաստանի Ազգային գրադարանի, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի, Աֆրիկայի ինստիտուտի, Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի գրադարանների, Մոսկվայի Պատմության պետական գրադարանի, Մ.Ի. Ռուդոմինոյի անվան Համառուսաստանյան արտասահմանյան գրականության պետական գրադարանի, ինչպես նաև Կահիրեի համալսարանի Ասիական հետազոտությունների կենտրոնի և «ալ-Աիրամ» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի գրադարանների ֆոնդերում պահվող գիտական նյութերի և մասնագիտական գրականության հետ:

Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են պաշտոնական հրատարակությունները, հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային

նվիրված արժեքավոր աշխատանքները, ինչպես նաև քաղաքական գործիչների հայտարարությունները, հուշերը, պարբերականները և տեղեկատուները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են Եգիպտոսի և այլ երկրների արտաքին գործերի և տեղեկատվության գերատեսչությունների հրատարակած տարեկան հուշագրերը<sup>1</sup>, հաշվետվությունները<sup>2</sup>, Եգիպտոսի քաղաքական գործընթացների և տնտեսական զարգացման մասին տարբեր լեզուներով տեղեկատուները, Եգիպտա-իսրայելյան և Եգիպտա-ամերիկյան, իրաքա-իրանյան, իրաքա-քուվեյթյան և իրաքա-ամերիկյան հարաբերություններին վերաբերող փաստաթղթերն ու համաձայնագրերը<sup>3</sup>, Պաղեստինի վերաբերող միջազգային փաստաթղթերի ժողովածուն և բյուլետենները<sup>4</sup>, ԽՍՀՄ-ի մերձավորարևելյան քաղաքականությանն առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն<sup>5</sup>:

Մյուս կարևոր աղբյուրը Եգիպտական և արաբական զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է նշել արաբալեզու՝ «ալ-Ախբար», «ալ-Աիրամ», «ամ-Նահար», «աս-Սիյասա», «ալ-Քաբաս», «աս-Սաֆիր», «աղ-

<sup>1</sup> زيارة أسادات لإسرائيل، وثائق وتعليقات إسرائيلية، بيروت، 1978.

<sup>2</sup> The Egyptian Point of View on International Issues, Egyptian Moves in International Arena Arab Republic of Egypt, Ministry of Information, 1981-1985, Cairo 1985; Ghali B.B., Egyptian Diplomacy in 1982-1989, Cairo 1989; The Middle East and North Africa, L., 2001; The New York Review of Books, N.Y., 1982; Sipry: Yearbook, 1990; Performance Report: Egypt and the Palestinian Question 1945-1988, Ministry of Foreign Affairs, Cairo 1988; Statement of the Tripoli Summit Conference JPS, N 27, Vol. 7, Spring, 1978; World Labor Report, Geneva, 1984; ТАСС Атлас, М., 1977-1990; ТАСС БПИ, М., 1982-1990; Арабская Республика Египет, Справочник, М., 1990; Государство Израиль, Справочник, М., 1986.

<sup>3</sup> A Framework for Peace in the Middle East Agreed at Camp David. Office of the White House Press Secretary, September, 18, 1978; United States Policy Statement Series, 1979; The Egyptian-Israeli Peace Treaty, - The White House, Monday, March 26, 1979; White Paper on Normalization of Relations between the Arab Republic of Egypt and State of Israel, Cairo, 1984; Selections from Iraq-Iran Dispute Baghdad: External Information Department Ministry of Culture and Information, 1983; The Memorandum of the Deputy Prime Minister and Minister of Foreign Affairs of Iraq Tariq Aziz to the Secretary General of the Arab League, 15, July 1990; The Message of the Minister of Foreign Affairs of the State of Kuwait to the Secretary Arab League Gazili Qusebi, 18, July 1990; U.S. Policy in the Persian Gulf. Hearing the Committee on Foreign Relations U.S. Senate. 102<sup>nd</sup> Congress, 1<sup>st</sup> Session. January 8, 1991, Wash.: U.S. GPO, 1991; Consideration on Draft Resolution "The Situation in the Persian Gulf". Making Before the Committee on Foreign Affairs. House of Representatives, 102<sup>nd</sup> Congress, 1<sup>st</sup> Session. On the Committee, Resolution 1, January 9, 1991, Wash.: GPO: 1991, p. 64; The UN Security Council and Iraq, Why it Succeeded in 1990, Why it didn't in 2003, and Why the United States Should Reddem it, by James M. and O'Sullivan D., տե՛ս <http://www.americandiplomacy.org>.

<sup>4</sup> Lukas Y., Documents on the Israeli-Palestinian Conflict (1967-1983), N.Y., 1985; Palestine P.L.O., Information Bulletin, N 51, August-September, 1986; Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций, М., 1984; ООН, Палестинский вопрос 1979-1990, Нью Йорк, 1991; Палестинская Декларация Национального Совета Палестины, 19 сессия - "Сессия Интифады и Национальной Независимости, Алжир, 1988; Палестинские документы: 280 избранных документов 1839-1987гг.; Итоговый документ 18-ой сессии Национального Совета Палестины, Алжир, 1988.

<sup>5</sup> СССР и ближневосточное урегулирование 1967-1988 (Документы, материалы), М., 1988; История международных отношений и внешней политики СССР, т. 3, М., 1987; Материалы 26 Съезда КПСС, М., 1981.

Դուսթուր», «ալ-Տուճուհուրիյա», «ալ-Յուրիյա», «ալ-Վատան ալ-Արաբի», «ալ-Շարկ ալ-Աուսատ», գերմանալեզու «Շախգել», «Յորիզոն», ուր տեղ են գտել Եգիպտոսի արտաքին քաղաքականությանն առնչվող նյութեր, Եգիպտոսի նախագահների և պաշտոնատարների հայտարարություններ, միջարաբական համաձայնագրերի ու պայմանագրերի տեքստեր և դրանց առնչվող վերլուծական նյութեր:

Ատենախոսության մեջ բարձրացվող տարբեր հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել է արաբագետ Ն.Յովհաննիսյանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի պատմության տարբեր ժամանակահատվածներին վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները<sup>6</sup>: Յարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես արաբական երկրների պատմությանն ու արտաքին հարաբերություններին, ինչպես նաև սոցիալ-դասակարգային և տնտեսական համակարգերին վերաբերող առանցքային հարցերը, ինչի օրինակ են Վ.Բայրուրոյանի, Շ.Կարամանուկյանի, Գ.Նովիկովայի, Ե.Աբգարյանի, Ռ.Կարապետյանի, Լ.Յարությունյանի, Ա.Փաշայանի, Ա.Յովհաննիսյանի, Պ.Սարաջյանի, Կ.Սամվելյանի աշխատանքները<sup>7</sup>:

<sup>6</sup> Оганесян Н.О., Национализация “Ирак Петролиум Компани” и поддержка арабскими странами Ирака (1972-1973гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 17, Եր., 1998; Оганесян Н.О., Отношение Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985; Յովհաննիսյան Ն.Յ., Իրաքի դիրքորոշումը պաղեստինյան պրոբլեմի նկատմամբ, Մերձավոր եվ Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Եր., 1987; Յովհաննիսյան Ն.Յ., Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Եր., 1982:  
<sup>7</sup> Բայրուրոյան Վ., Իրանն այսօր, Եր., 1999; Կարամանուկյան Շ.Լ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակահիմադրախտական պայքարում, Եր., 1988; Նովիկովա Գ., Նասերի գաղափարախոսության մի քանի ասպեկտները, Մերձավոր եվ Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 15, Եր., 1989; Աբգարյան Ե., Ներքաղաքական իրադրությունը Եգիպտոսում 1967-1970թթ., Մերձավոր եվ Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Եր., 1987; Կարապետյան Ռ., Արաբական երկրների ճոր և նորագույն պատմություն, Եր., 2003; Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996թթ.), Եր., 2000; Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արաբական Արևելքում, Եր., 1999; Կարապետյան Ռ., Սիրիա և Իսրայել, չօգտագործված հնարավորությունները և ապագա հեռանկարները խաղաղության հաստատման համար (1991-2001թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 20, Եր., 2001; Յարությունյան Լ., Պաղեստինյան քաղաքական և ռազմական կառույցները Լիբանանում 1958-1975թթ., Մերձավոր Արևելք, Եր., 2002; Յարությունյան Լ., Սիրիայի և Իսրայելի գործունը լիբանանյան ճգնաժամում (1975-1990թթ.), Արևելք, Եր., 2001; Յովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001; Յովհաննիսյան Ա., Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը 1976թ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 16, Եր., 1996; Սամվելյան Վ., Իրանա-իրաքյան պատերազմի հասարակական-քաղաքական արձագանքները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 18, Եր., 1999; Սամվելյան Վ., ԱՄԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 21, Եր., 2002; Սամվելյան Վ., ԱՄԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, հ. 22, Եր., 2003; Սարաջյան Պ.Յ., 1973թ. արաբա-իսրայելյան պատերազմը և արաբական առաջադիմական ուժերի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 9, Եր., 1978; Փաշայան Ա., Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությունը. կառուցվածքը և հիմնական նպատակները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 19, Եր., 2000:

Յայցողի առջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են, մասնավորապես խորհրդային և ռուս հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության հարցերի վերաբերյալ տպագրված մենագրությունները և ժողովածուները<sup>8</sup>:

Խորհրդային և հետխորհրդային շրջանի հեղինակների շարքում հարկ է հիշատակել Ա.Բորիսովի, Ա.Վասիլևի, Օ.Գերասիմովի և Ա.Կնյազևի, Ա.Եգորինի, Ա.Ջախարովի և Օ.Ֆոմինի, Ե.Պիրլինի, Ի.Ջվյագելսկայայի, Վ.Կիսելյովի, Լ.Սեդվեդկոյի, Ե.Պրիմակովի, Վ.Տիտորենկոյի, Ա.Էպշտեյնի, Մ.Վիդյասովի և Մ.Ումերովի, արժեքավոր աշխատությունները<sup>9</sup>:

Եգիպտոսի պատմության և արաբ-իսրայելյան հակամարտության հետազոտմանն առնչվող տարբեր խնդիրներին նվիրված արևմտյան

<sup>8</sup> Александров И.А., Монархии Персидского Залива: этап модернизации, М., 2002; Борисов Р.В., США: ближневосточная политика в 70-е годы, М., 1982; Валькова Л.В., Ближневосточный конфликт: проблемы урегулирования, М., 1988; Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987; Гусаров В.И., Экономическая независимость Арабских стран, М., 1993; Дмитриев Е., Палестинская трагедия, М., 1986; Ден Кон-Шербок, Дауд эль-Алами, Палестина-израильский конфликт: две точки зрения, М., 2002; Корнилов А.А., Между войной и миром: о процессе принятия внешнеполитических решений в государстве Израиль (1948-1993гг.), Нижний Новгород, 1994; Киселев В.И., Палестинская проблема в международных Отношениях: региональный аспект, М., 1988; Кини А.Г., Внешняя политика Арабских стран и Израйля, М., 1999; Компоненты арабо-израильского мира в 1990-е годы, Нижний Новгород, 1992; Мирский Г.И., Ливан в 1980-ые годы; Зейналов М.П., В блокадном Ираке, М., 2001; Мухсин Мухаммед Салих, Палестинский вопрос: его история и развитие до 2000 года, М., 2002; Михайлов Г.М., Западный берег реки Иордан и Сектор Газа под гнетом израильских колонизаторов, М., 1985; Ниязатов Ш.А., Ирано-иракский конфликт: исторический очерк, М., 1989; Новейшая история Арабских стран Азии, М., 1989; Шарипов Р.М., Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, М., 1986; Шарипов У.З., Персидский залив: нефть - политика и войны, М., 2000; Шарипов У.З., Политика и нефть в Персидском заливе 70-80-ых годов, М., 1994; Арабский мир: три десятилетия независимого развития, М., 1990.

<sup>9</sup> Борисов А.Б., Роль Ислама во внутренней и внешней политике Египта, М., 1991; Видясов М.Ф., Умеров М.Ш., Египет в последней трети 20 века, М., 2002; Герасимов О.Г., Князев А.Г., Египет: десять лет после Насера, М., 1980; Князев А.Г., Египет после Насера 1970-1981гг., М., 1986; Князев А.Г., Египет 80-ых годов, М., 1986; Егорин А.З., Абдель-Хамид Х.А., Война за ближневосточный мир, М., 1999; Егорин А.З., Египет нашего времени, М., 1998; Захаров А., Фомин О., Кэмп-Дэвид: политика обреченная на провал, М., 1982; Пырлин Е.Д., Сто лет противоборства: генезис, эволюция, современное состояние и перспективные решения палестинской проблемы, М., 2001; Пырлин Е.Д., Трудный и долгий путь к миру: взгляд из Москвы на проблему ближневосточного урегулирования, М., 2002; Звягельская И.Д., Конфликтная политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1990; Медведко Л.И., К Востоку и Западу от Суэца, М., 1980; Медведко Л.И., Мины под оливами, М., 1984; Медведко Л.И., “Сельмая” ближневосточная война, М., 1993; Медведко Л.И., Этот Ближний бурлящий Восток, М., 1985; Примаков Е., Война которой могло не быть, М., 1991; Титоренко В.Е., Формирование внешней политики Египта после Г.А.Насера (1970-1993гг.), М., 1994; Эпштейн А.Д., Бесконечное противостояние, М., 2003.

ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է առանձնացնել Մ.Թեսլերի, Բ.Թիբիի, Ե.Վեյցմանի, Ս.Սփեյգալի, Ի.Տարեգի, Զ.Բոլիի, Ա.Դյուրգալի և Ա.Գինբերուշի, Ջ.Բեթգինսկու, Չ.Ներցոգի, Բ.Մաթեուսի և այլոց աշխատությունները<sup>10</sup>:

Առանձնահատուկ արժեք են ներկայացնում Եգիպտոսի արաբական քաղաքականությանը և արաբ-իսրայելյան հակամարտությանը նվիրված հետազոտությունները, որոնց շարքում հարկ է նշել Ռ.Քոհենի, Ա.Սադաթի, Մ.Շաֆեի, Մ.Գեմմերի, Վ.Քուլմանի, Ջ.Ֆասկինսի, Բ.Իբրահիմի, Ա.Ջիրյուսի, Ա.Լեշի և Մ.Թեսլերի, Ա.Մաքդերմոթի, Թ.Պարկերի, Չ.Թրիփի, Ա.Թեյլորի, Բ.Գալիի, Ռ.Ապոլյաքի, Պ.Կալվոկորեսի, Գ.Կոնցեյմանի, Ա.Ռուբիի, Գ.Կրեմերի, հետազոտությունները<sup>11</sup>:

Ատենախոսությանը մեծապես նպաստել են արաբ հեղինակներ՝ Ն.Յաուաբմայի<sup>12</sup>, Տ.Յադրադի<sup>13</sup>, Սալիմ ազ-Ջբի<sup>14</sup>, Մահմուդ ալ-Յուսուֆի<sup>15</sup>, Խալիլ

<sup>10</sup> Bzhezinski Z., Power and Principe, Memoirs of the National Security Adviser, London, 1983; Cooley J.K., Payback: American's Long War in the Middle East, Brassey's (USA), 1991; Drysdale A., Hinnebusch A.R., Syria and the Middle East Peace Process, N.Y., 1991; Speigal S.L., The Other Arab-Israeli Conflict: Making American's Middle East Policy, from Truman to Reagan, Chicago 1983; Tareq I., Iraq and Iran: Roots of Conflict, Syracuse, Univ.Press, 1982; Taylor A.R., The Arab Balance of Power, Syracuse Univ. Press., 1982; The Politics of Change in the Middle East, Wash., 1993; The Iraqi Agression on Kuwait, The Truth and Tragedy, Center for Research and Studies in Kuwait, L., 1994; Matheus K., The Gulf Conflict and International Relations, L., N.Y., 1993; Ahdel H.J., Der Libanon Krieg und seine Vorgeschichte, Blätter für Documents und Internationalen Politik, Köln, 1983; Schlicht A Libanon Zwischen Bürgerskring und Internationale Konflikt, Bonn, 1986; Zu Hasans Besuch Präsident Mubarak, zur Aufnahme Diplomaticher Beziehungen, Bonn, 1984.

<sup>11</sup> Cohen R., Culture and Conflict in Egiptian-Israeli Relations: A Dialogue of Deaf, Wash., 1990; El-Sadat A. In Search of Identity, London, 1978; Haskins J., Leaders of the Middle East, Wash., 1985; Heikal M., Autumn of Fury, The Assassination of Sadat, London, 1983; Heikal M.H., Imaginary Peace, Secret Negotiations between Arabs and Israel, Cairo, 1996; Ghali B.B., Achievements of Egyptian Diplomacy 1987, Cairo; Ghali B.B., Egypt's Road to Jerusalem, Cairo, p. 405; Ibrahim K.M., The Camp David Accords, A Testimony, L., 1986; Jiryuis S., Arab World of the Opposition to Sadat-JPS, L., 1978; Lesch A.M., Tessler M., Israel, Egypt and the Palestinians: From Camp David to Intifada, Indian Univ. Press, 1989; McDermot A., Egypt from Nasser to Mubarak. A Flawed Revolution, L., 1988; Parker T., The Road to Camp David. U.S. Negotiating Strategy towards the Arab-Israeli Conflict, N.Y., 1989; Quandt W., The United States and Egypt, The American Univ. Press, Cairo, 1990; Tripp Charles, Owen Rojer, Egypt under Mubarak, Routlege, L. and N.Y., 1989; Vafikiotis R.J., Relations between Egypt and Israel 1977-1982, Arab and Regional Politics in the Middle East, L., 1984; Taylor A.R., The Arab Balance of Power, Syracuse Univ. Press., 1982; Krämer G., Ägypten unter Mubarak: Identität und Nationales Interesse, Baden-Baden, 1986; Hinnebusch R., Ehteshami A., The Foreign Policy of Egypt, The Foreign Policy of Middle East States, L., 2002; Аппдайк Р.Дж., Саддам Хусейн, Ростов-на-Дону, 1999; Гали Б.Б., Путь Египта в Иерусалим, М., 1999; Кальвокоресса П., Мировая политика после 1945 года, М., 2000; Концельман Г., Арафат: от Террориста к человеку мира, Ростов-на-Дону, 1997; Рубби А., Палестинский марафон, М., 2001.

<sup>12</sup> ح. نائف، أزمة منظمة التحرير الفلسطينية، نيقوسيا، 1984.

<sup>13</sup> طريق حداد، الإمتاق الأردني الفلسطيني 1947-1988، عمان، 1988.

<sup>14</sup> سالم الذبي، الإنتفاضة، بيروت، 1991.

<sup>15</sup> محمد اليوسفي، فلسطين الثورة، عدد 739.

ալ-Յասսանի<sup>16</sup>, Աբդ ալ-Վաֆիի և Աբու Տահայի<sup>17</sup> քննարկվող թեմային նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները:

9.ԱՇԽՆԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՆՑՎԱԾՔՆ Ու ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից), եզրակալումից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորոյթը:

Առաջին գլուխը՝ «Եգիպտոսի ՎԵՐԱԴԱՐՉՆ «ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» 1981-1989 ԹԹ.», անդրադառնում է 1970-ականների վերջին արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցին, ինչպես նաև 1980-ականներին «արաբական ընտանիք» Եգիպտոսի աստիճանական վերադարձին:

Գլխի առաջին ենթաբաժնում («Եգիպտոսը և արաբական աշխարհը») քննարկվում են Եգիպտոս-արաբական հարաբերությունները 1978-1981թթ. ժամանակահատվածում: 1973թ. արաբ-իսրայելական պատերազմից հետո ակնհայտ դարձավ Եգիպտոսի նախագահ Անվար ա-Սադաթի՝ Իսրայելի հետ համաձայնության գալու պատրաստակամությունը: Ընդ որում ա-Սադաթը հավատացած էր, որ մերձավորարևելյան հակամարտության կարգավորումը պետք է նախաձեռնվի և ղեկավարվի ԱՄՆ-ի կողմից: Պատմագրության մեջ Իսրայելի հետ Եգիպտոսի համաձայնության գալու սկիզբն ընդունված է համարել 1977թ. նոյեմբերի 19-ը, երբ ա-Սադաթը այցելեց Երուսաղեմ՝ քննեսթում ելույթ ունենալու նպատակով: Եգիպտոս-իսրայելյան համաձայնությունը ի կատար ածելու նպատակով 1978թ. սեպտեմբերին Եգիպտոսն Իսրայելի հետ ստորագրեց քննփոխության համաձայնագրերը, իսկ 1979թ. Եգիպտոս-իսրայելական հաշտության անջատողական պայմանագիրը: Աս-Սադաթն իր քայլը հիմնավորեց 1967թ. արաբ-իսրայելյան պատերազմի հետևանքով Եգիպտոսի կրած մարդկային և նյութական ծանր կորուստներով: Արաբ-իսրայելյան զինված հակամարտությունից Եգիպտոսի դուրս գալը, ընդհանուր առմամբ, դատապարտվեց արաբական աշխարհում:

<sup>16</sup> خالد الحسن، الإنتفاضة، تونس، 1988.

<sup>17</sup> عبد الوفي، أنوطه، الإنتفاضة، بيروت، 1989.

Արաբական բոլոր երկրները, բացի Օմանից, Սուդանից և Սոմալիից, դադարեցրեցին դիվանագիտական հարաբերությունները Կահիրեի հետ: Սառեցվեց նաև Եգիպտոսի անդամակցությունն Արաբական պետությունների լիգայում (ԱՊԼ) և Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում (ԻԿԿ): Խորհրդային արևելագիտության մեջ, ընդհանուր առմամբ, ընդունված է եղել այն տեսակետը, որ Եգիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում ամբողջական էր, սակայն աշխատանքի մեջ տարաբնույթ փաստերով հիմնավորվում է, որ ի տարբերություն քաղաքականի, Եգիպտոսը տնտեսական մեկուսացման չի ենթարկվել: Արաբական երկրների մեծամասնությունը շարունակում էր պահպանել Եգիպտոսի հետ առևտրատնտեսական հարաբերությունները, որի ապացույցն է նաև այն փաստը, որ Եգիպտական աշխատուժը չհեռացվեց հակաեգիպտական պատժամիջոցներ ընդունած արաբական երկրներից: Եգիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում երկարատև չէր և ճեղքվեց 1980թ. աշնանը:

Երկրորդ ենթաբաժնում («Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգի ձևավորումը 1980-ականների սկզբին») քննարկվում է Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգը, որն առաջ քաշեց 1981թ. վերջին երկրի նորընտիր նախագահ Յոսեֆ Մուբարաքը: 1981թ. հոկտեմբերին Եգիպտոսի նախագահ Սադատի սպանությունից հետո երկրի ղեկավարի պաշտոնը ստանձնեց փոխնախագահ Մուբարաքը: Վերջինս Եգիպտոսի նախագահին կից քաղաքական գրասենյակի տնօրեն Ուսամա ալ-Բազի հետ մշակեց Կահիրեի՝ «արաբական ընտանիք զգույշ վերադարձի» արտաքին քաղաքական նոր հայեցակարգը, որը հանգում էր հետևյալ սկզբունքներին՝ շարունակել քեմփոկոլիայան համաձայնագրերի շրջանակներում հետամուտ լինել պաղեստինյան անկախ պետականության ստեղծմանը, շարունակել համագործակցությունն ԱՄՆ-ի հետ, վերականգնել հավասարակշռված հարաբերությունները մնացած բոլոր պետությունների և մասնավորապես գերտերություն խՍՀՄ-ի հետ, Իսրայելի հետ շարունակել հարաբերությունների բնականոնացման գործընթացը, հաղթահարել մեկուսացվածությունն արաբական աշխարհում, վերականգնել Կահիրեի տեղն ու դերը միջարաբական հարաբերություններում, տարաբնույթ դարձնել արտաքին աշխարհից ստացվող տնտեսական և ֆինանսական օգնության աղբյուրները, ինչպես նաև հետևել «չմիանալու շարժման» քաղաքականությանը: Ի տարբերություն Սադատի «Եգիպտոսն ամեն ինչից վեր է», Մուբարաքն առաջ քաշեց «Եգիպտոսը բոլորի համար է» կարգախոսը, որի հիմքում դրված էր չափավոր և հավասարակշռված արտաքին քաղաքականության սկզբունքը: Քեմփոկոլիայան

համաձայնագրերին հետևելու պատրաստականության հետ միասին Մուբարաքն արաբական աշխարհին ի ցույց դրեց, որ հետամուտ է արաբական շահերի պաշտպանությանը: Արտաքին քաղաքական նոր հայեցակարգի շնորհիվ Եգիպտոսը, պահպանելով քեմփոկոլիայան համաձայնագրերով նախատեսված եգիպտա-իսրայելյան բազմաբովանդակ հարաբերությունները, կարողացավ 1982թ. ապրիլին հետ վերադարձնել դեռ 1967թ. արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում գրավված Սինայ թերակղզին, ինչպես նաև Եգիպտա-արաբական մերձեցման նոր ուղեգիծ հարթել:

Երրորդ ենթաբաժնում («Եգիպտոսի դիրքորոշումն իրաքա-իրանյան պատերազմի հանդեպ և «արաբական ընտանիք» Եգիպտոսի վերադառնալու առաջին փուլը 1980-1984թթ.») ներկայացվում է իրաքա-իրանյան պատերազմը և այդ հարցում Կահիրեի դիրքորոշումը, ինչպես նաև Եգիպտոսի՝ «արաբական ընտանիք» վերադառնալու առաջին փուլը: 1980թ. վերջին Իրաքը, որ հակաեգիպտական պատժամիջոցների նախաձեռնողներից և առաջիններից մեկն էր, որ խզեց Կահիրեի հետ դիվանագիտական հարաբերությունները, սպառազինություններ տրամադրելու խնդրանքով դիմեց Եգիպտոսին: 1982թ. ամռանը Եգիպտոսը Իրաքին 2,7 մլրդ դոլարի օգնություն, ինչպես նաև 60 օդաչու տրամադրեց: Օգտվելով առիթից՝ Մուբարաքը ռազմական փորձագետներ ուղարկեց նաև Բահրեյն: 1980թ. սեպտեմբերին սկսված իրաքա-իրանյան պատերազմում Թեհրանին արագ պարտության մատնելու Բաղդադի անկարողությունը ստիպում էր Իրանի իսլամական հեղափոխության արտահանումից զգուշացող Ծոցի միապետություններին հնարավոր վտանգի դեպքում ակնկալել Եգիպտոսի աջակցությունը: «Արաբական ընտանիքում» Եգիպտոսի բացակայության հետևանքով խախտվել էր ուժերի հավասարակշռությունն արաբական աշխարհում, ինչը ստիպում էր արաբական շատ երկրների վերականգնել Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունները՝ անտեսելով այն հանգամանքը, որ Կահիրեն շարունակում էր գործել քեմփոկոլիայան համաձայնագրերի շրջանակներում: Իրաքա-իրանյան պատերազմում Իրաքին աջակցելու արդյունքում 1984թ. հունվարին Իսլամական կոնֆերանս կազմակերպության Կասաբլանկայի զագաթնաժողովում վերականգնվեց Եգիպտոսի անդամակցությունն իսլամական այդ հեղինակավոր միջազգային կազմակերպությունում: 1981-1984թթ. de facto վերականգնվեցին Եգիպտոսի և Պարսից ծոցի արաբական միապետությունների հարաբերությունները:

Չորրորդ ենթաբաժնում («Եգիպտոսի քաղաքական դերի վերաարժեքավորումն արաբական աշխարհում և «արաբական ընտանիք» վերադարձի երկրորդ փուլը 1984-1989թթ.») քննարկվում է Եգիպտոսի քաղաքական դերի վերաարժեքավորումն արաբական աշխարհում և Կահիրեի՝ «արաբական ընտանիք» վերադարձի երկրորդ փուլը: 1984-1988թթ. Եգիպտոսը ներգրավված էր արաբական աշխարհում ընթացող քաղաքական գործընթացներում: Եգիպտոսը կարևոր դերակատարություն էր ստանձնել արաբ-խորհրդային հակամարտության մեջ ի պաշտպանություն արաբների շահերի: 1984թ. մայիսին, որպես բողոքի ակցիա, Եգիպտոսը դադարեցրեց դիվանագիտական հարաբերությունները Սալվադորի և Կոստա-Ռիկայի հետ, որոնք իրենց դեսպանությունները թել-Ավիվից տեղափոխել էին Երուսաղեմ: Եգիպտա-արաբական հարաբերությունների բարելավմանն էր նպաստում նաև 1984-1985թթ. ԽՍՀՄ-ի հետ Եգիպտոսի առևտրա-տնտեսական և դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հանգամանքը: Մուբարաքի արտաքին քաղաքականությունը խարսխվում էր մի քանի սկզբունքների վրա՝ օտար երկրների հետ շփման ժամանակ շեշտը դնել անմիջական երկկողմ հարաբերությունների վրա, երբեք չչտապել որոշումներ ընդունելուց, միջազգային հարաբերություններում առաջնորդվել ազգային շահերի պաշտպանության գաղափարով: Այդ համատեքստում Սինայ թերակղզու հետ վերադարձը հիմք դարձավ արաբական որոշ երկրների համարելու, որ Իսրայելի հետ համաձայնության գալու քաղաքական ուղեգիծն ավելի արդյունավետ է, քան պարզապես ռազմական դիմակայությունը: 1987թ. նոյեմբերին Ամմանում ԱՊԼ գագաթնաժողովում որոշվեց Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցը թողնել յուրաքանչյուր արաբական պետության հայեցողությանը: Գագաթնաժողովից հետո Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնեցին տասնչորս արաբական երկրներ: 1989թ. մայիսին Կասաբլանկայում ԱՊԼ հերթական գագաթնաժողովում վերականգնվեց Եգիպտոսի անդամակցությունն այդ հեղինակավոր միջարաբական կազմակերպությունում: Արդեն 1989թ. վերջին Եգիպտոսը լիարժեք դիվանագիտական հարաբերություններ ուներ արաբական բոլոր երկրների և Պաղեստինի Ազատագրության կազմակերպության հետ: Կահիրեի վերադարձն «արաբական ընտանիք» նպաստեց 1989թ. հուլիսին Աֆրիկյան միասնության կազմակերպության նախագահ Մուբարաքի ընտրվելուն:

Երկրորդ գլուխը՝ «ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆԵՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ԱՍՏՄԱՐ 1981-1991ԹԹ.», անդրադառնում է 1982թ. իսրայելական ագրեսիային

Լիբանանում, և այդ համատեքստում պաղեստինյան հարցի նկատմամբ Եգիպտոսի դիրքորոշմանը, 1981-1991թթ. մերձավորարևելյան հակամարտության կարգավորմանն ուղղված մի շարք, այդ թվում՝ Եգիպտոսի նախաձեռնությունների և առաջ քաշված ծրագրերի քննարկմանը:

Առաջին ենթաբաժնում («Եգիպտոսը, պաղեստինյան հարցը և 1982թ. իսրայելյան ագրեսիան Լիբանանում») քննարկվում է 1982թ. իսրայելական ագրեսիան Լիբանանում և Եգիպտոսի դիրքորոշումն այդ հարցում: 1982թ. ամռանն իսրայելական բանակը ներխուժեց Լիբանան՝ նպատակադրվելով ոչնչացնել այդ երկրում տեղակայված պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցները: Ի տարբերություն արաբական երկրների մեծամասնության, Եգիպտոսը գործուն քայլեր ձեռնարկեց ընդհուպ մինչև ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում թել-Ավիվին դատապարտող բանաձևերի առաջադրումը: Կահիրեն մի կողմից խստագույնս դատապարտեց Իսրայելի ագրեսիվ գործողությունները Լիբանանում, մյուս կողմից պատրաստակամություն դրսևորեց շարունակելու Իսրայելի հետ քենփոկիդյան համաձայնագրերով նախատեսվող պաղեստինյան ինքնավարության հետ սկսված բանակցությունները: Սակայն 1982թ. սեպտեմբերին Բեյրութի Սաբրա և Շատիլա պաղեստինյան թաղամասերում տեղի ունեցած ջարդից հետո Մուբարաքը թել-Ավիվից հետ կանչեց Եգիպտոսի դեսպանին և դադարեցրեց Իսրայելի հետ պաղեստինյան ինքնավարության շուրջ ընթացող բանակցությունները: Եգիպտոսի նախագահի նման դիրքորոշումը, ինչպես նաև պաղեստինցի վտարանդի մարտիկներին ապաստան տրամադրելու առաջարկը, իրաքա-իրանյան պատերազմի հետ միասին դարձավ այն կարևորագույն գործոններից մեկը, որ նպաստեց «արաբական ընտանիք» Եգիպտոսի վերադարձի գործընթացին: Մուբարաքի նման դիրքորոշման արդյունքում ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթն արաբական ղեկավարներից առաջինն էր, որ 1978-ից հետո այցելեց Կահիրե՝ Մուբարաքին հանդիպելու նպատակով:

Սույն գլխի երկրորդ ենթաբաժինը («Եգիպտոսի դիրքորոշումը պաղեստինյան հարցի հանդեպ 1983-1991թթ.») անդրադառնում է 1980-ականներին մերձավորարևելյան հակամարտության կարգավորմանն ուղղված տարբեր հայեցակարգերի քննարկմանը և դրանց իրագործման հարցում Եգիպտոսի ակտիվ միջամտությանը, ինչպես նաև պաղեստինյան հարցի կարգավորման Մուբարաքի նախաձեռնությանը: 1980-ականների սկզբին պաղեստինյան խնդրին ուղղված արաբական ջանքերը որոշ չափով նվազել էին՝ կապված իրաքա-իրանյան պատերազմի, իսկ հետո նաև Լիբանանում իսրայելական ագրեսիայի հետ: Այդ



պարագայում արաբական միակ երկիրը, որ դրական միջնորդի դեր կարող էր կատարել պաղեստինցիների և իսրայելցիների միջև, Եգիպտոսն էր: Նախագահ Մուբարաքը, պահպանելով հակամարտության երկու կողմերի հետ հարաբերությունները և 1980-ականներին սատարելով պաղեստինյան հարցի լուծմանն ուղղված բոլոր ծրագրերն ու նախաձեռնությունները (մասնավորապես Ֆահիի և Ֆեսի համարարաբական, Ռեյգանի արաբ-իսրայելական համակարտության կարգավորման ծրագրերը, հորդանանա-պաղեստինյան համաձայնագիրը), կարողացավ իր հստակ դիրքորոշման միջոցով առավելագույնս ներդաշնակել կարգավորման այդ բոլոր նախագծերը՝ ամփոփելով դրանցում եղած առավել դրական կողմերը: 1989թ. Մուբարաքը հանդես եկավ պաղեստինյան հարցի կարգավորման իր նախաձեռնությամբ, որի հիմքում ընկած էր «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքը: Պաղեստինյան հարցում Եգիպտոսի կառուցողական դիրքորոշումը նպաստեց 1988թ. ամերիկյան վարչակազմի կողմից ՊԱԿ-ի՝ որպես հակամարտության կողմ ճանաչելուն և վերջինիս հետ երկխոսություն սկսելու պատրաստականության դրսևորմանը: Եգիպտոսը մեծ դերակատարություն ունեցավ նաև 1991թ. Սադդիի խաղաղության կոնֆերանսի հրավիրման գործում: Ընդհանուր առմամբ 1981-1991թթ. պաղեստինյան հարցի նկատմամբ Եգիպտոսի դիրքորոշումն այն անկունաքարային գործոններից էր, որն անմիջականորեն պայմանավորում էր Կահիրեի վերահաստատումն «արաբական ընտանիքում»:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ԻՐԱԶԱՎՈՒԹՅԱՆ ԵՎՆՈՒԹՅԱՆ 1990-1991ԹԹ.», անդրադառնում է 1980-ականների վերջին արաբական աշխարհում ձևավորված ուժերի նոր հարաբերակցությանը, Քուվեյթի դեմ իրաքյան ագրեսիային և Եգիպտոսի դիրքորոշմանը, Բաղդադի դեմ 1991թ. միջազգային կռիվների շարքերում Եգիպտոսի մասնակցությանը ռազմական գործողություններին, ինչպես նաև հետպատերազմյան արաբական տարածաշրջանում ձևավորված ուժերի նոր հարաբերակցությանը:

Առաջին ենթաբաժնում («Եգիպտոս-արաբական հարաբերություններն 1990-1991թթ. իրաքա-քուվեյթյան ճգնաժամից հետո») տարածաշրջանային զարգացումների համատեքստում լուսաբանվում են 1980-ականների վերջին Եգիպտոս-արաբական հարաբերությունները: Իրաքա-իրանյան պատերազմի ավարտից հետո Իրաքը ռազմական ներուժի տեսանկյունից գերազանցում էր տարածաշրջանի երկրների մեծ մասին: Իրաքի նախագահ Սադդամ Յուսեյնը ձգտում էր գերակայող դիրքեր զբաղեցնել արաբական աշխարհում, ինչն անմիջականորեն առնչվում էր «արաբական ընտանիք» նոր վերադարձած

Եգիպտոսի շահերին: 1990թ. Ս.Յուսեյնը Քուվեյթին մեղադրեց Իրաքին ֆինանսական ճգնաժամի մեջ գցելու համար: Մուբարաքը հնարավորինս փորձում էր իրաքա-քուվեյթյան դիմակայությունը կարգավորել դիվանագիտական ճանապարհով: Բաղդադ կատարած մի քանի այցելություններից հետո թվում էր, թե Սադդամ Յուսեյնը կընդառաջի խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու Մուբարաքի նախաձեռնությանը: Սակայն նպատակադրվելով արագ լուծել երկրի առջև ծառայած տնտեսական և ֆինանսական խնդիրները՝ 1990թ. օգոստոսին իրաքյան բանակը ներխուժեց Քուվեյթ: Քուվեյթի վրա հարձակվելու հարցում ոչ պակաս դերակատարություն ունեցավ Սադդամ Յուսեյնի ծրագրերին չարձագանքելու ԱՄՆ-ի դիրքորոշումը:

Երկրորդ ենթաբաժնում («Իրաքի հարձակումը Քուվեյթի վրա, «Փոթորիկ անապատում» ռազմական օպերացիան և Եգիպտոսը») լուսաբանվում է Եգիպտոսի և միջազգային հանրության դիրքորոշումն Իրաքի գործողությունների հանդեպ: Եգիպտոսը կոչ արեց արաբական երկրներին միանալ Բաղդադին դատապարտող եգիպտական բանաձևին և մասնակցություն ունենալ միջազգային կռիվների «Փոթորիկ անապատում» ռազմական գործողություններին: Եգիպտոսը հակաիրաքյան կռիվներում գորաքանակի առունով թվաքանակով երկրորդն էր ամերիկյանից հետո՝ շուրջ երեսուն հազար: Այդ ճանապարհով Եգիպտոսը փորձում էր ապահովել արաբական տարրը միջազգային կռիվներում, ինչը կարևոր էր հետպատերազմյան Իրաքի վերականգնման գործում: 1991թ. հունվարին սկսված «Փոթորիկ անապատում» ռազմական գործողությունը տևեց քառասուն օր և հարյուր ժամ, և ավարտվեց իրաքյան բանակի կատարյալ ջախջախմամբ:

Գլխի երրորդ ենթաբաժինը («Եգիպտոսը և ուժերի նոր հարաբերակցությունն արաբական աշխարհում Իրաքի դեմ 1991թ. պատերազմի ավարտից հետո») քննարկում է Իրաքի դեմ 1991թ. պատերազմի ավարտից հետո արաբական աշխարհում ձևավորված ուժերի նոր հարաբերակցությունը: Պատերազմից հետո Արաբական Արևելքում ձևավորված քաղաքական նոր իրավիճակի պայմաններում Կահիրեն մի շարք հարցերում առաջնայնությունը փորձեց վերցնել իր ձեռքը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Իրաքի դեմ 1991թ. պատերազմի ավարտից հետո Եգիպտոսը քաղաքական և տնտեսական մեծ ձեռքբերումներ ունեցավ: 1991թ. գարնանը ԱՊԼ նստավայր գրասենյակը կրկին տեղափոխվեց Կահիրե, իսկ Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Իսմաթ Աբդ ալ-Մազիդը նշանակվեց ԱՊԼ գլխավոր քարտուղար: Նույն թվականին Եգիպտոսի փոխվարչապետ Բուտրոս Ղալին նշանակվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի

պաշտոնում: Միջազգային կոալիցիայի մասնակցությամբ Եգիպտոսը մի շարք տնտեսական ձեռքբերումներ ունեցավ: ԱՄՆ-ը մարեց Եգիպտոսի ռազմական պարտքը՝ 6,7 մլրդ դոլար, 1979-ից Եգիպտոսին ԱՄՆ-ի անվերադարձ տրամադրած գումարի ընդհանուր չափը 1998թ. հասավ 22 մլրդ դոլարի: Վարկեր տրամադրող փարիզյան ակումբը մարեց Եգիպտոսի 50 մլրդ արտաքին պարտքի 50 տոկոսը, իսկ միջազգային արժույթային հիմնադրամը մշակեց Եգիպտոսին վարկերի տրամադրման հատուկ ծրագիր, որ պետք է նպաստեր երկրի տնտեսական վերակառուցմանն ու արագ զարգացմանը: Նպատակ ունենալով կանխել հետագա ճգնաժամային իրավիճակները, ինչպես նաև ապահովել Իրաքի դեմ պատերազմից հետո տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը, Եգիպտոսը և արաբական յոթ երկրներ 1991թ. մարտին ստորագրեցին Դամասկոսի հռչակագիրը, որ չափազանց կարևոր ձեռքբերում էր Կահիրեի համար: Համաձայն ուժերի նոր հարաբերակցություն ուրվագծող հռչակագրի՝ Եգիպտոսը ստանձնում էր Պարսից ծոցի արաբական երկրների անվտանգությունն ապահովելու կարևորագույն դերակատարությունը: Հռչակագրով սահմանվում էին արաբական միապետությունների և Եգիպտոսի միջև ռազմաքաղաքական համագործակցության հիմնական դրույթները, որոնք Կահիրեին տալիս էին չափազանց մեծ առավելություններ:

ԵԶՐԱՓՈՎԿՍԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը եզրակացնում է, որ՝ 1. Իսրայելին դիմակայող արաբական երկրների համընդհանուր պայքարից դուրս գալով՝ Եգիպտոսը փորձեց ցույց տալ, որ տարածաշրջանում տևական խաղաղության հասնելու համար հարկավոր է հաշվի առնել հակառակորդի գոյության իրավունքը: Այս առումով քեմփոկիդյան համաձայնագրերը կարելի է լուրջ առաջընթաց համարել մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում: 2. Չնայած գոյություն ունեցող այն տեսակետներին, թե Եգիպտոսն արաբական աշխարհում ենթարկվել է նաև տնտեսական մեկուսացման, հակված ենք կարծելու, որ Եգիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում հիմնականում քաղաքական բնույթ է կրել: 3. 1981-1991թթ. Իսրայելի և ԱՄՆ-ի հետ հաստատված բազմակողմ հարաբերությունների արդյունքում Եգիպտոսն ունեցավ քաղաքական և տնտեսական մի շարք ձեռքբերումներ: 4. Պաղեստինյան հակամարտության կարգավորման գործում Եգիպտոսի գործում միջամտությունը, նրա հավասարակշռված դիրքորոշումը Լիբանանում՝ 1982թ. իսրայելյան ագրեսիայի, 1980-1988թթ. իրաքա-իրանյան պատերազմի, 1990թ. Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման նկատմամբ, ինչպես նաև

Եգիպտոսի մասնակցությունն Իրաքի դեմ միջազգային կոալիցիայի ռազմական գործողություններին, դարձան քաղաքական այն նպաստավոր գործոնները, որոնք Եգիպտոսի քաղաքական վերնախավը՝ ի դեմս Սուբարաքի, կարողացավ լավագույնս օգտագործել արաբական աշխարհում իր դիրքերն ամրապնդելու և «արաբական ընտանիք» վերադառնալու համար: 5. 1984թ. Եգիպտոսը վերականգնեց իր անդամակցությունն Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում, իսկ 1989թ.՝ Արաբական պետությունների լիգայում և կարողացավ նորովի հանդես գալ իսլամական և արաբական շրջանակներում և ակտիվ մասնակցություն ունենալ տարածաշրջանային քաղաքական գործընթացներում: 6. Եգիպտոսի մասնակցությունն Իրաքի դեմ միջազգային կոալիցիայի ռազմական գործողություններին նպաստեց նաև Եգիպտոսի հետ Սիրիայի որոշակիորեն լարված հարաբերությունների բնականոնացմանը, ինչպես նաև ևս մեկ անգամ փաստեց Եգիպտական գործոնի ակտիվության անհրաժեշտությունն արաբական աշխարհում: 1991թ. Իրաքի դեմ պատերազմի ավարտից հետո ստորագրված Դամասկոսյան հռչակագրով վերահաստատվեց Եգիպտոսի առաջատար դիրքն արաբական գործերում, որ գլխավորապես պայմանավորված էր Եգիպտոսի ներուժով:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. جور جيورجيان، صياغة أوروبية الجديدة للسياسة الخارجية المصرية في الثمانينات، أريف، 3-6 نوفمبر، 2002 (Գևորգյան Գ., Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգի ձևավորումը 1980-ական թվականներին, «Արեվ», նոյեմբեր, No. 11 (09), Կահիրե, 2002, էջ 3-6):
2. Գևորգյան Գ., Եգիպտոսի դիրքորոշումը 1990-1991թթ. իրաքա-քուվեյթյան ճգնաժամի հանդեպ, Մերձավոր Արևելք, Եր., 2002, էջ 69-77:
3. Գևորգյան Գ., Եգիպտոսը և իրաքա-իրանյան պատերազմը 1980-1988թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 22, Եր., 2003, էջ 56-65:
4. Գևորգյան Գ., Արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցի շուրջ 1970թ. վերջ – 1980թ. սկիզբ, Լրաբեր հասարակական գիտությունների, No. 2 (608), մայիս-օգոստոս, Եր., 2003, էջ 105-113:

ГЕВОРГЯН ГОР ГЕВОРГОВИЧ

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ АРАБСКОЙ ПОЛИТИКИ ЕГИПТА  
В ПЕРВОЕ ДЕСЯТИЛЕТИЕ ПРЕЗИДЕНТСТВА  
МУХАММЕДА ХОСНИ САИДА МУБАРАКА  
(1981-1991ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02. – “Всеобщая история”

Защита состоится 9 сентября 2004г. по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24г., Институт востоковедения НАН РА

Р Е З Ю М Е

Представленная работа посвящена изучению ключевых вопросов арабской политики Египта, которые непосредственно связаны с внешней политикой президента Мухаммеда Хосни Саида Мубарака в период 1981-1991гг. Изучение данной проблемы актуально и важно с научной, политической и практической точек зрения.

Исследование арабской политики Египта в данный период времени будет способствовать правильному пониманию важных аспектов межарабских отношений, а также вопросов, связанных с политическими процессами, протекающими в арабском регионе.

Тема диссертации не являлась предметом отдельного исследования, хотя ее отдельные аспекты освещались как армянскими, так и советскими, российскими и другими зарубежными востоковедами, однако, в основном, в свете арабо-израильского противостояния и общих проблем, касающихся политических и экономических процессов ближневосточного региона. По своему содержанию и рассматриваемым вопросам эта работа является первым исследованием в армянском востоковедении.

Диссертация состоит из вступления, трех глав (каждая из которых содержит разделы), заключения и списка использованных источников и литературы.

Во вступлении обосновывается актуальность и важность темы диссертации, формулируются цели и задачи исследования, теоретическое и практическое значение работы, а также ее научная новизна, дается краткий обзор использованных источников и литературы, разъясняются методологические основы работы.

В первой главе диссертации (“Возвращение Египта в “арабскую семью” 1981-1989гг.”) рассматриваются вопросы политической изоляции Египта в арабском мире вследствие подписания Каиром кэмп-дэвидских соглашений и египетско-израильского сепаратного мирного договора, в результате которого Египет вышел из арабо-израильского вооруженного противостояния, а также вопросы постепенного восстановления места и роли Каира в арабском мире в период президентства Хосни Мубарака.

Вторая глава (“Позиция Египта по отношению к палестинскому вопросу 1981-1991гг.”) посвящена исследованию израильской агрессии 1982 года против Ливана и политических шагов египетского руководства в вопросе разрешения палестинской проблемы в контексте восстановления места и роли Египта в арабском мире. Кроме того, анализируются инициативы предпринятые в данный промежуток времени, а также и доктрины, выдвинутые с целью урегулирования арабо-израильского конфликта.

Третья глава диссертации (“Египет и ирако-кувейтский кризис 1990-1991гг.”) освещает соотношение сил в арабском мире в конце 80-х годов, иракскую агрессию против Кувейта, осуждение Египтом действий Багдада и участие египетских войск в военной операции “Буря в пустыне” против Ирака, а также расстановку политических сил в арабском регионе в послевоенный период, когда Каир возглавив группу арабских государств, подписавших так называемую “Дамасскую декларацию”, предоставлявшая Египту особый статус “военного щита” умеренных режимов Персидского Залива, оказался на качественно новом уровне.

В Заключении диссертации сделаны выводы по основным рассмотренным в работе вопросам, а также указаны важные достижения


Египта в первой декаде правления президента Египта Мухаммеда Хосни Саида Мубарака.

Работа может представлять интерес для изучения арабской политики Египта и политических процессов ближневосточного региона, а также может быть использована для составления лекционных курсов по разным аспектам истории Египта. Положения и выводы диссертации могут быть полезны для подготовки аналитических материалов для государственных органах Республики Армения, а также для разработки некоторых, связанных с Египтом, внешнеполитических вопросов.

GOR G. GEVORGYAN

KEY ISSUES OF ARAB POLICY OF EGYPT IN THE FIRST DECADE UNDER  
MOHAMMED HOSNI MOUBARAK'S PRESIDENCY

(1981-1991)

A handwritten signature in black ink, appearing to read 'G. G. Gevorgyan', written over a horizontal line.